ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲՈՒՀԵՐՈՒՄ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԻՆՉ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ: ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ իրականացնում է միջպետական համագործակցության ծրագրեր օտարերկրյա բուհերի հետ, որոնք միտված են օտարերկրյա պետությունների պետական բուհերում ՀՀ քաղաքացիների ուսումնառության կազմակերպմանը, կրթության մակարդակի բարձրացմանը, նորարարական կրթական ծրագրերի խթանմանը, միջազգային կապերի ընդլայնմանը, ինչպես նաև հայկական կրթական հաստատությունները միջազգային ասպարեզում ճանաչելի դարձնելուն և Հայաստանը որպես հուսալի ու գիտականորեն զարգացող երկիր ներկայացնելուն:

Օտարերկրյա 7 պետությունների (Վիետնամի Սոցիալիստական Հանրապետություն, Ռումինիա, Հորդանանի Հաշիմյան Թագավորություն, Բուլղարիայի Հանրապետություն, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Վրաստան) պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում միջպետական համաձայնագրերով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը հատկացված կրթաթոշակային տեղերի մասին ներկայացնում ենք ամփոփ և հանրամատչելի տեղեկատվություն:

Գործող կարգերը

Միջպետական համագործակցության շրջանակներում կրթությունն անվճար է: Այն իրականացվում է ընդունող պետության ֆինանսական միջոցների հաշվին:

Միջազգային համաձայնագրերի հիման վրա օտարերկրյա պետության բարձրագույն ուսումնական հաստատություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից գործուղված ՀՀ քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության **զորակոչից տարկետում չի տրամադրվում*:**

---

* Արական սեռի ՀՀ քաղաքացիների՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման տրամադրման վերաբերյալ հարաբերությունները կարգավորվում են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու մասին» **ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշումով**: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=189049

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից կարող են տարկետում ստանալ օրենքով սահմանված նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիները:

Ծանոթություն. բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված) կրթական ծրագրով սովորող (կամ տվյալ ուսումնական տարվա շրջանակներում դիմորդ հանդիսացող) քաղաքացիների **նշանակալի նվաճումներ են համարվում** Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն դիմելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում՝

1) քաղաքացու ստացած մրցանակները (ոսկե կամ արծաթե կամ բրոնզե մեդալներ) դպրոցականների հետևյալ առարկայական միջազգային օլիմպիադաներում՝

ա. «International Mathematikal Olympiad, IMO»՝ մաթեմատիկա առարկայից,

բ. «International Physics Olympiad, IPhO»՝ ֆիզիկա առարկայից,

գ. «International Chemistry Olympiad, IChO»՝ քիմիա առարկայից,

դ. «International Olympiad in Informatics, IOI»՝ ինֆորմատիկա առարկայից,

ե. «International Biology Olympiad, IBO»՝ կենսաբանություն առարկայից,

զ. «International Philosopy Olympiad, IPO»՝ փիլիսոփայություն առարկայից,

է. «International Astronomy Olympiad, IAO»՝ աստղագիտություն առարկայից,

ը. «International Olympiad on Astronomy and Astrophysics, IOAA»՝ աստղագիտություն և աստղաֆիզիկա առարկաներից,

թ. «International Geography Olympiad, IGeO»՝ աշխարհագրություն առարկայից,

ժ. «International Linguistics Olympiad, ILO»՝ լեզվաբանություն առարկայից,

ժա. «International Junior Science Olympiad, IJSO»՝ բնագիտություն առարկայից,

ժբ. «International Earth Sciense Olympiad, IESO»՝ երկրի մասին գիտություն առարկայից,

2) քաղաքացու կողմից հայոց լեզու կամ հայ գրականություն կամ հայ ժողովրդի պատմություն առարկաներից դպրոցականների հանրապետական օլիմպիադաներում 1-ին տեղը գրաված լինելու հանգամանքը:

Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերով սովորող (կամ տվյալ ուսումնական տարվա շրջանակներում դիմորդ հանդիսացող) քաղաքացիների նշանակալի նվաճում է համարվում ուսումնառության շրջանակներում միջին որակական գնահատականի (մագիստրատուրայի համար՝ բակալավրի, իսկ ասպիրանտուրայի համար՝ մագիստրոսի կրթական ծրագրով ուսումնառության շրջանակներում) առավելագույն արժեքի առնվազն 80 տոկոս ցուցանիշ ունենալու և դիմելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում՝

1) տվյալ մասնագիտության գծով «Վեբ օֆ նոլիջ (Web of Knowledge)» կամ «Սկոպուս (Scopus)» միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում առնվազն մեկ (հեղինակությամբ կամ համահեղինակությամբ)՝ հղման ենթակա, հրապարակված գիտական հոդված ունենալու, կամ

2) Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հրապարակման տարվա ցանկում ընդգրկված ամսագրերում տվյալ մասնագիտության գծով մագիստրատուրայում սովորելու համար առնվազն երկու, իսկ ասպիրանտուրայում սովորելու համար առնվազն երեք (հեղինակությամբ կամ համահեղինակությամբ)՝ հղման ենթակա, հրապարակված գիտական հոդվածներ ունենալու հանգամանքը:

Որոշման հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=189049

Ուսանողի կրթության ծախսերը հոգում է հրավիրող երկիրը: Կեցության ծախսերը ոչ բոլոր պետություններն են հոգում, դրանք սահմանվում են համաձայնագրերով: Այս

պահի դրությամբ հանրակացարանային պայմաններ ապահովում են Ռումինիան, Բուլղարիան, Հորդանանը, Չինաստանը:

Մրցույթին կարող են մասնակցել հանրակրթական դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և բուհերի շրջանավարտները, ավարտական դասարանում կամ կուրսում սովորող օտար լեզուներին տիրապետող (ցանկացած օտար լեզու, եթե կոնկրետ լեզվի պահանջ չկա հրավիրող կողմից) ՀՀ քաղաքացիները:

Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել տվյալ երկրի պետական բուհերում գործող միայն մեկ մասնագիտության և մեկ կրթական աստիճանի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ մասնագիտական քննություն և հարցազրույց:

Մրցույթի **առաջին փուլն** անցկացվում է.

- բակալավրի կրթական ծրագրով՝ ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգի. Որոշման հղումը՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=75964

- մագիստրոսի կրթական ծրագրով՝ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 6-ի N1193-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգի: Հրամանի հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=41863

- Հետբուհական կրթություն ստանալու համար մրցույթը կանցկացվի՝ համաձայն ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի N238-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգի»: Որոշման հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=104366

Մրցույթի **երկրորդ փուլում** ստուգվում են դիմորդ(ներ)ի օտար լեզվի իմացության աստիճանը, ընտրած մասնագիտությամբ կրթություն ստանալու շարժառիթները, գործուղվելիք երկրի մասին ընդհանուր տեղեկացվածության մակարդակը (հասարակական-քաղաքական, տնտեսական, աշխարհագրական, մշակութային, օրենսդրական և այլ գիտելիքներ): Հանձնաժողովի և հրավիրված անձանց (կրթաթոշակ տրամադրող երկրի դեսպանության ներկայացուցիչներ, համապատասխան օտար լեզվի

և տվյալ մասնագիտության գծով համապատասխան մասնագետներ) կողմից յուրաքանչյուր դիմորդի կարող է տրվել ոչ ավելի, քան 6 հարց:

Պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն հայտարարության, որը տեղադրվում է ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքէջում.

1. դիմում և դիմում-հարցաթերթիկ մրցույթին մասնակցելու համար (ձևերը կցվում են), դիմում-ձևաթուղթ
2. հրավիրող երկրի ներկայացրած հարցաթերթիկ, օրինակ՝ Բուլղարիայինը հարցաթերթիկ,
3. ավարտական փաստաթղթի՝ ատեստատի կամ դիպլոմի և դրանց միջուկների պատճեններ՝ անգլերեն թարգմանված և նոտարական հաստատմամբ, ՀՀ արդարադատության նախարարության կողմից վավերացված (ապոստիլ),
4. ավարտական դասարանում սովորողները՝ առաջադիմության թերթիկ (ակադեմիական տեղեկանք)՝ նոտարի կողմից անգլերեն թարգմանված և հաստատված, ՀՀ արդարադատության նախարարության կողմից վավերացված (ապոստիլ),
5. բակալավրի ավարտական կուրսերում սովորողները՝ ակադեմիական տեղեկանք ամբողջ ուսումնառության վերաբերյալ՝ նոտարի կողմից անգլերեն թարգմանված և հաստատված, ՀՀ արդարադատության նախարարության կողմից վավերացված (ապոստիլ),
6. բժշկական տեղեկանք՝ ընդունող երկրի պահանջներին համապատասխան, նոտարի կողմից անգլերեն թարգմանված և հաստատված, ՀՀ արդարադատության նախարարության կողմից վավերացված (ապոստիլ)
7. ինքնակենսագրություն անգլերենով (CV) ,
8. անձնագրի պատճեն,
9. 3×4 չափսի 3 հատ գունավոր լուսանկար,
10. արական սեռի անձինք ներկայացնում են զինվորական գրքույկի կամ կցագրման վկայականի պատճենը կամ զորակոչային տեղամասից համապատասխան տեղեկանք:

Դիմորդները նշված փաստաթղթերը ներկայացնում են անձամբ կամ այլ անձի միջոցով՝ բնօրինակով և պատճենած (1 օրինակ)՝ ԿԳՄՍ նախարարության հայտարարությունում ներկայացված ժամկետներում:

Սահմանված ժամկետում փաստաթղթերի փաթեթը ներկայացնում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, արտաքին կապերի և սփյուռքի վարչության արտաքին կապերի բաժին:
Հասցեն՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 612 սենյակ:
Հեռ. (010) 59-96-44, (010) 59-96-96

Բուլղարիայի Հանրապետություն

Բուլղարիայի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում անվճար բարձրագույն (բակալավր և մագիստրատուրա) կրթություն ստանալու համար հատկացվում է **4 կրթաթոշակային տեղ**:

Ուսուցումն իրականացվելու է բուլղարերենով, սակայն լեզվին չտիրապետող ուսանողներն անցնում են լեզվի մեկ տարվա նախապատրաստական դասընթաց Բուլղարիայում:
Մրցույթին կարող են մասնակցել հանրակրթական դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և բուհերի շրջանավարտները, ավարտական դասարանում կամ կուրսում սովորող օտար լեզուներին տիրապետող ՀՀ քաղաքացիները: Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել միայն մեկ մասնագիտության և մեկ կրթական աստիճանի համար:
Մրցույթը կկազմակերպվի երկու փուլով՝ մասնագիտական քննություն և հարցազրույց:

Բուլղարիայի պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանկը.
https://eurocompass.ru/vuzs.php

Յուրաքանչյուր պետության մասով ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքէջում տրվում է հայտարարություն, որտեղ հստակ սահմանվում է փաստաթղթերի ներկայացման և քննությունների կազմակերպման ժամկետները: https://escs.am/am

Վրաստան

Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրոսական կրթություն ստանալու համար հատկացվում է **10 կրթաթոշակային տեղ**:

Մրցույթին կարող են մասնակցել բուհերի շրջանավարտները և ավարտական կուրսում սովորող, անգլերենին կամ ռուսերենին վարժ տիրապետող ՀՀ քաղաքացիները (հակառակ դեպքում, ըստ անհրաժեշտության, նրանք պետք է հանձնեն բարձրագույն ուսումնական հաստատության կազմակերպած ներբուհական քննությունները): Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել միայն մեկ մասնագիտության համար: Մրցույթը կկազմակերպվի երկու փուլով՝ մասնագիտական քննություն և հարցազրույց:

Մրցույթը հաջողությամբ հաղթահարած թեկնածուների ուսումը կիրականացվի անվճար՝ Վրաստանի բյուջեի միջոցների հաշվին, սակայն ուսման տարեկան վարձավճարը պետք է չգերազանցի 2250 վրացական լարին: Ամսական կրթաթոշակը կազմում է 300 վրացական լարի: Վրացական կողմի նպատակահարմարության պարագայում մրցույթի հաղթողների համար Վրաստանում կարող է կազմակերպվել գիտելիքի ստուգում:

Վրաստանի պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանկը.
https://ru.studyintbilisi.com/list-of-universities-in-georgia/

Յուրաքանչյուր պետության մասով ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքէջում տրվում է հայտարարություն, որտեղ հստակ սահմանվում է փաստաթղթերի ներկայացման և քննությունների կազմակերպման ժամկետները: https://escs.am/am

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում բարձրագույն և հետբուհական կրթություն ստանալու համար հատկացվում է **20 կրթաթոշակային տեղ**, որից մագիստրատուրա՝ 14, ասպիրանտուրա՝ 3, դոկտորանտուրա՝ 2, վերապատրաստում՝ 1: 2025-2026 ուստարվա համար չինական կողմը չի հատկացրել բակալավրի տեղեր:

ՉԺՀ բուհերում մագիստրատուրայի և դոկտորանտուրայի կրթական ծրագրերին դիմած թեկնածուները պետք է ունենան չինարենի իմացության 4-րդ մակարդակի (HSK4) վկայական կամ այն ստանան Չինաստանում՝ անգլերենով չինարեն սովորելու համար հատկացված մեկ տարում:
Կրթաթոշակի թեկնածուները պետք է ուսումնասիրեն ՉԺՀ նախընտրած բուհի պահանջները, ընտրեն մասնագիտությունը, նախօրոք կապ հաստատեն տվյալ բուհի հետ՝ նախնական նամակ-հրավերի ստացման նպատակով: ՉԺՀ կոնկրետ բուհից նամակ-հրավերի ստացումը պարտադիր պայման Չինաստանի կողմից տրամադրվող կրթաթոշակային ծրագրին մասնակցելու համար: Կողմը կարող է ներկայացնել նաև պարտադիր այլ պայմաններ տվյալ ուսումնական տարվա ընդունելության համար:

Մրցույթին կարող են մասնակցել բուհերի շրջանավարտները, ավարտական կուրսում սովորողները, թեկնածուական և գիտահետազոտական աշխատություններ կատարող գիտնականները, վերջին 2 տարվա ընթացքում չինարենի, մշակույթի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում մասնագիտական գործունեություն ծավալող ՀՀ քաղաքացիները:
Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել միայն մեկ մասնագիտության և մեկ կրթական աստիճանի համար:
Մրցույթը հաջողությամբ հաղթահարած թեկնածուների ուսումը կիրականացվի անվճար՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության բյուջեի միջոցների հաշվին:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանկը.
https://www.globaldialog.ru/countries/china/higher_education/

Յուրաքանչյուր պետության մասով ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքէջում տրվում է հայտարարություն, որտեղ հստակ սահմանվում է փաստաթղթերի ներկայացման և քննությունների կազմակերպման ժամկետները: https://escs.am/am

Հորդանանի Հաշիմյան Թագավորություն

Հորդանանի Հաշիմյան Թագավորության բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով բարձրագույն կրթություն ստանալու համար հատկացվել է **30 կրթաթոշակային տեղ** հետևյալ մասնագիտություններով՝

- տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- ճարտարապետություն և շինարարություն,
- հնագիտություն,
- լեզվաբանություն,
- բժշկություն,
- արաբերեն,
- իսլամագիտություն:

Կրթությունն իրականացվում է արաբերենով, սակայն ընդունվել կարող են ցանկացած օտար լեզվի իմացությամբ քաղաքացիները, նախապատվությունը տրվում է անգլերենին:

Մրցույթին կարող են մասնակցել հանրակրթական դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և բուհերի շրջանավարտները, ավարտական դասարանում կամ կուրսում սովորող ՀՀ քաղաքացիները: Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել միայն մեկ մասնագիտության համար:

Մրցույթը հաջողությամբ հաղթահարած թեկնածուների ուսումը կիրականացվի ամբողջությամբ անվճար՝ Հորդանանի Հաշիմյան Թագավորության բյուջեի միջոցների հաշվին:

Հորդանանի Հաշիմյան Թագավորության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանկը.
https://free-apply.com/ru/articles/country/248816

Յուրաքանչյուր պետության մասով ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքէջում տրվում է հայտարարություն, որտեղ հստակ սահմանվում է փաստաթղթերի ներկայացման և քննությունների կազմակերպման ժամկետները: https://escs.am/am

Վիետնամի Սոցիալիստական Հանրապետություն

Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի, մագիստրոսի, ասպիրանտուրայի կրթական ծրագրերով ուսանելու, ինչպես նաև ինտերնատուրա ընդունվելու համար հատկացվել է **5 կրթաթոշակային տեղ:**

Մրցույթին կարող են մասնակցել հանրակրթական դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, բուհերի ավարտական դասարանում կամ կուրսում սովորողներն ու շրջանավարտները:

Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել միայն մեկ մասնագիտության և մեկ կրթական աստիճանի համար:

Վիետնամական կողմը հոգում է ուսման և կեցության հետ կապված ծախսերը և տրամադրում է ամսական կրթաթոշակ:

Ուսուցումն իրականացվելու է վիետնամերենով, սակայն լեզվին չտիրապետող ուսանողներն անցնում են լեզվի մեկ տարվա նախապատրաստական դասընթաց Վիետնամում:

Դիմորդները, բացի վերը նշված փաստաթղթերից պետք է ներկայացնեն.

1. վիետնամերենի իմացության վկայական՝ նոտարական հաստատմամբ (առկայության դեպքում),

2. ասպիրանտուրայի դիմորդների համար՝ հետազոտական աշխատանք, երկու երաշխավորագիր՝ տրված համապատասխան բնագավառի գիտնականների (դոկտորի գիտական աստիճան) կողմից, դիմորդի կարողությունների, փորձի, հետազոտական նվաճումների վերաբերյալ փաստաթղթեր՝ նոտարական վավերացմամբ (առկայության դեպքում),
3. ինտերնատուրայի դիմորդների համար՝ գործնական պարապմունքների պլան:

Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանկը. (կողմը կարող է ներկայացնել կոնկրետ բուհերի ցանկ)
https://free-apply.com/ru/articles/country/1562822

Յուրաքանչյուր պետության մասով ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքէջում տրվում է հայտարարություն, որտեղ հստակ սահմանվում է փաստաթղթերի ներկայացման և քննությունների կազմակերպման ժամկետները: https://escs.am/am

Ռումինիա

Ռումինիայի բարձրագույն ուսումնական հաստատություններում բարձրագույն և հետբուհական կրթություն ստանալու համար հատկացվել է **8 կրթաթոշակային տեղ**՝ 3 բակալավրիատ, 4 մագիստրատուրա, 1 տեղ՝ ասպիրանտուրա:

Ուսուցումն իրականացվելու է ռումիներենով, սակայն լեզվին չտիրապետող ուսանողներն անցնում են լեզվի մեկ տարվա նախապատրաստական դասընթաց Ռումինիայում: Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել միայն մեկ մասնագիտության և մեկ կրթական աստիճանի համար:

Մրցույթին կարող են մասնակցել հանրակրթական դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և բուհերի շրջանավարտները, ավարտական դասարանում կամ կուրսում սովորող, օտար լեզուներին տիրապետող և բարձր առաջադիմություն ունեցող ՀՀ քաղաքացիները (ցանկացած օտար լեզու, եթե հրավերի մեջ հստակ նշում չկա): Հետբուհական (ասպիրանտական) կրթության համար դիմորդները պետք է ներկայացնեն նաև՝

1. ռեֆերատ՝ հայերենով (10 էջ),
2. օտար լեզվի իմացությունը հաստատող վկայական և ստուգարքային թերթիկ համակարգչից օգտվելու հմտությունների վերաբերյալ,
3. Ռումինիայում գիտական ղեկավարի նախնական համաձայնությունը:

Պայմանների և կարգերի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություն կարելի է ստանալ հետևյալ հղումից.
Ռումինական կողմի սահմանած կարգերը կրթաթոշակների վերաբերյալ

Մրցույթը հաջողությամբ հաղթահարած թեկնածուների ուսուցումը կիրականացվի ամբողջությամբ անվճար՝ Ռումինիայի բյուջեի միջոցների հաշվին:

Ռումինիայի պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանկը.
https://free-apply.com/ru/articles/country/798549

Յուրաքանչյուր պետության մասով ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքէջում տրվում է հայտարարություն, որտեղ հստակ սահմանվում է փաստաթղթերի ներկայացման և քննությունների կազմակերպման ժամկետները: https://escs.am/am

Ռուսաստանի Դաշնություն

Երևանում Ռուսական տունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ, հայտարարում է կրթաթոշակային տեղերի մրցույթ՝ **Ռուսաստանի Դաշնության** բարձրագույն ուսումնական հաստատություններում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով սովորելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք և ազգությամբ ռուսները, որոնք մշտապես բնակվում են Հայաստանի Հանրապետության տարածքում (ՀՀ-ում ժամանակավոր բնակության իրավունք կամ կացության թույլտվություն ունեցողներ և Ռուսաստանի Դաշնության տարածքում 01.09.2021 թ. դրությամբ գրանցում չունեցողներ):
Մրցույթը հաջողությամբ հաղթահարած թեկնածուների ուսուցումը կիրականացվի ամբողջությամբ անվճար՝ ՌԴ բյուջեի միջոցների հաշվին:

Դիմորդները պետք է գրանցվեն education-in-russia.com պորտալում, լրացնեն ձևաթուղթը և կցեն անհրաժեշտ փաստաթղթերը: Դիմումներն ընդունվում են միայն առցանց:
Պայմանների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություն կարելի է ստանալ հետևյալ հղումներից.
Առաջին և երկրորդ փուլի համար պահանջվող փաստաթղթերը

Թեկնածուների ընտրության կարգը

Մասնագիտական առարկաներ ըստ ոլորտների

Օլիմպիադաների ցուցակ, որոնց մասնակցությունը տալիս է լրացուցիչ միավորներ

Եթե գրանցման և դիմումը լրացնելու հետ կապված որևէ դժվարություն առաջանա, թեկնածուն կարող է խորհրդատվություն ստանալ Երևանի Ռուսական տան աշխատակիցներից:
Հասցե՝ Մարշալ Բաղրամյան պողոտա 34, հեռախոս՝ (012) 54 48 90 (ներքին 422), (098) 54 48 90:
Խորհրդակցության օրեր՝ երկուշաբթի-ուրբաթ՝ 11:00-17:00, ընդմիջում՝ 13:00-14:00, հանգստյան օրեր՝ շաբաթ, կիրակի:

Ռուսաստանի Դաշնության բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանկը. https://vuz.edunetwork.ru/

Յուրաքանչյուր պետության մասով ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքէջում տրվում է հայտարարություն, որտեղ հստակ սահմանվում է փաստաթղթերի ներկայացման և քննությունների կազմակերպման ժամկետները: https://escs.am/am

Նյութը պատրաստել է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը (ԿՏԱԿ)՝ ԿԳՄՍ նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության աջակցությամբ:

Հեղինակ՝ Ժաննա Ֆուրտոյան